

«Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանի խոսքը Վազգեն Սարգսյանի կիսանդրու բացման առիթով

Հայոց անկախ պետականության կերտման բախտորոշ ժամանակաշրջանը ծնեց իր հերոսներին: Արցախյան գոյամարտի տարիներին իր ողջ մեծությամբ ու հերոսական կերպարով բարձրացավ Վազգեն Սարգսյանը: Անգնահատելի է Վազգեն Սարգսյանի դերն ու ավանդը նորանկախ Հայոց պետականության կառուցման, Հայաստանի զինված ուժերի ու հայոց բանակի կայացման գործում և Հայաստանի հասարակական-քաղաքական դաշտի ամրապնդման մեջ:

Հայաստանի գրողների միության անդամ, գրող, հրապարակախոս Վազգեն Սարգսյանը շարժման առաջին իսկ օրերից ազատամարտիկների առաջին շարքերում էր՝ իբրև Լեռնային Ղարաբաղի ազգային ազատագրական պայքարի առաջին կազմակերպիչներից ու զինվորներից մեկը, ով շուտով կռվող տղաների կողմից ճանաչվեց առաջնորդ ու ղեկավար: Սպարապետը կամավորական բոլոր ջոկատների հրամանատարն էր, վայելում էր անառարկելի հեղինակություն, և նա էր կազմակերպում հայրենի հողն ու սահմանները թշնամու ոտնձգություններից զերծ պահելու ազգանվեր գործը: Նա էր առաջնորդում, և նրա ոգին էր թևածում Նոյեմբերյանից մինչև Մեղրի, Գետաշենից մինչև Դիզակ: Նա բացարձակ հեղինակություն էր բոլոր ազատամարտիկների, հրամանատարների, զինվորականների ու պետական գործիչների համար:

Հայ ժողովրդի զրկանքների ու տառապանքների, հերոսության ու անկոտրում կամքի շնորհիվ սպարապետ Վազգենի առաջնորդությամբ մենք ազատագրեցինք մեր պատմական հայրենիքի Արցախ աշխարհը, և Վազգենը հպարտորեն գոչեց.

<<Ամենակատարյալ ստեղծագործությունն ազատագրված հողն է>>:

Ուրիշ էլ ինչ ասեր, որ արժևորվեին ապրած ու պայքարած տարիները, և ասելիքը մնար որպես կարգախոս մի ողջ ժողովրդի համար: Վազգենյան կարգախոսը մեզանից պահանջում է.

<<Յուրաքանչյուր հայ, ով իր մեջ կրում է սեփական ազգի արժանապատվության գենը, պարտավոր է դիմակայել մարտահրավերներին, պահպանել ամենակատարյալ ստեղծագործությունը և արժանանալ իր պատմական հայրենիքում անկախ ու ինքնիշխան ապրելու իրավունքին>>:

Սպարապետը քաջ գիտակցում էր, որ բոլոր հաղթանակներն ունեն արժեք միայն այն ժամանակ, երբ պաշտպանված են: Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը անսպառ եռանդով ձեռնամուխ եղավ ազգային բանակի կառուցման գործին:

Հայ ժողովրդի մեծանուն գրող Սերո Խանզադյանը սպարապետին ուղղված բաց նամակում գնահատելով պատմական պահը գրել է.

<<Յուրաքանչյուր հայ պետք է քաջ գիտակցի, որ վտանգը երբեք չի անցել, և զենքը վայր դնել չի կարելի: Դուք գիտեք, որ իմ ամբողջ գաղափարը ազգային հզոր պետականություն ունենալն է: Սիրելի՛ Վազգեն, զավակս, ես խորապես երջանիկ եմ, որ իմ այս կյանքի դառը մայրամուտին հպարտությամբ կգնամ այս աշխարհից՝ իմանալով, որ ազգս հզոր բանակ ունի, բանակը՝ փառահեղ առաջնորդ, և որ կկատարվի մեր վաղեմի երազանքը՝ Շավարշավանից մինչև Արդահան պիտի ծածանվի դրոշը հայկական>>:

Որպես ազգային առաջնորդ ու լայն մտահորիզոնի տեր անհատականություն՝ սպարապետը քաջ գիտակցում էր, որ ազգերի ու պետությունների հակամարտություններում հաղթում են նրանք, ովքեր կարողանում են զարգացման անսխալ ու արդյունավետ ուղու վրա կառուցել իրենց երկրի ապագան:

Վազգեն Սարգսյանը, որպես գաղափարական ու քաղաքական հենարան, ընտրեց Հայաստանի հանրապետական կուսակցությունը:

Հայաստանի հանրապետական կուսակցությունը ձևավորվել է ազգային ու պետականության գաղափարների վրա 25 տարի առաջ և բոլոր ժամանակներում ունեցել է իր ուրույն տեղն ու դերը մեր երկրի համար: Աշոտ Նավասարդյանի կողմից հիմնադրված Հանրապետական կուսակցությունը արցախյան ազատամարտի տարիներին զենքը ձեռքին կռվել է հանուն հայրենիքի:

Արցախյան ազատամարտի և պետականաշինության գործում Վազգեն Սարգսյանի աջակիցն ու հետևորդը դարձավ Արցախի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Սերժ Սարգսյանը, ով Արցախում ու Հայաստանում վայելում է արժանի հեղինակություն իր անցած մարտական ուղով և պատերազմի ղեկավարման փորձառությամբ: Պատերազմի ամենածանր օրերին Սերժ Սարգսյանին վստահվեց երկրի պաշտպանության ղեկավարումը, և նրա օրոք կնքվեց հաղթական խաղաղությունը: Այդ երկու քաղաքական գործիչները համատեղ ձեռնամուխ եղան երկրի ուժեղացմանն ու զարգացմանը: Հանրապետական կուսակցությունը իր ազգային գաղափարներով ու գործելաոճով արժանացավ հայ ժողովրդի գնահատականին, և նրան վստահվեց քաղաքական ղեկավարման պատվավոր գործը:

Արդեն 18 տարի է Հանրապետական կուսակցությունը, որպես մեծամասնական քաղաքական ուժ, ղեկավարում ու առաջնորդում է մեր ժողովրդին, ապահովելով նրա սոցիալ-տնտեսական զարգացումն ու ռազմական պաշտպանությունը: Հայաստանի հանրապետական կուսակցությունն իր գործունեությամբ անշեղորեն ապահովում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հավասարությունը, թե քաղաքական ասպարեզում, թե տնտեսության մեջ և թե մշակութային կյանքում:

Կուսակցությունը իր օրենսդիր և գործադիր գործունեությամբ նպաստում է մեր ժողովրդի և մեր պետության հարաճուն զարգացմանը:

Հանրապետական կուսակցությունը դիմակայելով արդի մարտահրավերներին՝ շարժվում է առաջ՝ ապահովելով երկրի արժանապատիվ զարգացումը յուրաքանչյուր քաղաքացու համար:

Սիրելի՛ հայրենակիցներ, այս հուշահամալիրում ամփոփված են երկու հերոսական սերունդների աճյունները, որոնք իրենց կյանքը զոհեցին հանուն հայրենիքի և մեր այսօրվա խաղաղ գոյության: Այս հողը պահվել է սյունեցի քաջերի մարտական ոգու ու քաջության շնորհիվ և ապրողներիս պարտքն է հիշելու ու փառաբանելու նրանց, քանզի մեր հայրենիքը պահպանվել է նրանց հերոսության շնորհիվ: Հերոսներին միանում է նրանց մարտական հրամանատարն ու առաջնորդը՝ սպարապետ Վազգեն Սարգսյանը:

Բացելով Վազգեն Սարգսյանի հուշարձան-կոթողը հարգանքի տուրք ենք մատուցում մեծ հայրրդուն, պետական գործչին, մարտական առաջնորդին և Հանրապետական կուսակցության ղեկավարին: